ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«22» նոյեմբեր 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 721-Ա
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 10259/2024/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանի (Հասցե Երևան, Երվանդ Քոչար, շ. 19, բն. 72, ՀԾՀ՝ 5107532969) չկատարված հարկային պարտավորությունը 24.07.2024թ-ի դրությամբ կազմում է 5.878.819 դրամ, որից հարկ՝ 5.874.120, ՀՀ դրամ, տույժ՝ 4.699 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 28.10.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, , սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Հակային մարմնում առկա, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ֆ/Ա Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանի կողմից 01.09.2023 թվականից Կոտայքի մարզ, Աբովյան համայանքի, գ. Առինջ, Աբովյան թղմ. 7-րդ թղմ., 17 տուն հասցեում գտնվող անշարժ գույքերը տրամադրվել է վարձակալությամբ, Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների դիվանագիտական ներկայացուցչության ամսական 4.895.100 ՀՀ դրամով: 2023 թվականի համար անշարժ գույքի վարձակալական գործարքից ստացված եկամուտը կազմել է 58.741.200 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 153-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ հարկային գործակալն ազատվում է, Օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկելու և պահելու պարտավորությունից, եթե՝ ՀՀ անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամուտ վճարողն ազատված է հարկային գործակալի պարտավորությունից:Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարները 60,0 միլիոն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ 10% դրույքաչափով:

Ֆիզիկական անձ Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանը 2023թ. հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավոր էր 2024թ. հուլիսի 22-ը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 24.07.2024թ-ի դրությամբ կազմում է 5.878.819 ՀՀ դրամ գումար, որից հարկ՝ 5.874.120 ՀՀ դրամ, տույժ՝ 4.699 ՀՀ դրամ:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանից գանձել 5.878.819 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

24.07.2024թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	22.07.2024թ	5.874.120	4.699		5.878.819	պետական բյուջե	900008000490

1. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ, իրավաբանական վարչություն
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/:

Երևան, Ս.Դավթի 87

«28» հոկտեմբեր 2024թ.

Անտանինա Վլադիմիրովնա Ջզմեջյանին
Հասցե՝ Երևան, Երվանդ Քոչարի շ 19, բն 72
ՀԾՀ՝ 5107532969

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Սույն Ծանուցագրով Դուք ծանուցվում եք, որ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով կազմված «Հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող» թիվ 10259/2024/Ե/Ա արձանագրության համաձայն, 24.07.2024թ-ի դրությամբ Ձեր չկատարված պարտավորության գումարը կազմում է 5.878.819 դրամ, այդ թվում հարկ՝ 5.874.120 դրամ, տույժ 4.699 դրամ:

Համաձայն 24.07.2024թ-ին կազմված թիվ 10259/2024/Ե/Ա արձանագրության, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գ. Առինջ, Աբովյան թղմ., 7 փող., տ. 17 հասցեում գտնվող անշարժ գույքը 01.09.2023թ-ից 4.895.100 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով տրամադրվել է վարձակալության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ուստի, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29. 1-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11:00 ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և «կամ» առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 403 սենյակ:

Եթե սույն ծանուցագիրը ստանալու օրվան հաջորդող 3-րդ օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վարչական վարույթի լսումներին ներկայանալ հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00 կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և «կամ» առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա, 4-րդ հարկ 403 սենյակ: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Միաժամանակ առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկել և հարկային մարմին ներկայացնել թիվ 10259/2024/Ե/Ա արձանագրությունում նշված գործարքին վերաբերող հարկային հաշվարկը և վճարել պարտավորությունները:

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԽՈՍ՝ 010-30-91-91

ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐ՝ 91-27

Զարուհի Ֆարմանյան